

## ԼՈՍ ԱՆՃՐԼՍ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐՈՒ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՒԱԾ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆ ԵՂԻԱՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ

Լոս Անճըրլսի մեր պաշտօնակիցը «Ասպարէզ» Մարտ 15ի իր թիւին մէջ կու տար այլապէս զգայացունց հետեւեալ լուրը:

Ուրբաթ, Մարտ 11ին, Լոս Անճըրլս գաւառի Գերագոյն ատենանին մէջ, իրաւաբաններ Մարք Կիրակոս եւ Պրայըն Քապաթէք դատ բացած են իրենց երբեմնի գործակից Վարդգէս Եղիայեանին դէմ պնդելով, թէ ան եւ անոր գործակիցը՝ Ռիթա Մահտեսեանը, ապօրինի միջոցներով շահագործած են այն գումարները, որոնք ապահովուած են Հայոց Յեղասպանութեան զոհերու ժառանգորդներուն եւ վերապրողներուն կողմէ «Նիւ եորք Լայֆ» ու ապահովագրական այլ ընկերութեանց դէմ բացուած դատերէն, 2004ին ու 2005 տարիներուն:

Հստ դատին, ամբաստանեալները մօտաւորապէս 1 միլիոն տոլար «նուիրած են» մարդասիրական շինծու կազմա-

կերպութեանց, զանոնք համայնքային կազմակերպութեանց յանձնելու փոխարէն:

Մօտաւորապէս 3 միլիոն տոլար պէտք է բաժնուէր հայկական համայնքային կազմակերպութիւններու:

«Տէլի ճըրնըլ»ի հետ կատարուած հարցազրոյցի մը ընթացքին, Եղիայեան անհիմն համարած է այս ամբաստանութիւնները՝ իր կարգին դատերէն գոյացած գումարէն «17 միլիոն տոլարը պահէ» (շաբ.ը էջ 2)



## ԹՈՒՐԳԻԱ ՀԱՅԵՐԷՆ ԱՌԱՋ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ԱՊՐԻԼ 24ԻՆ ԹՈՒՐԳ ԲԱՆԱԳՆԱՅԸ ԱՄՆ ԳԱՅԱԾ Է

Ծանօթ է, որ ամեն տարի այս շրջանին, արագիւններու գաղթէն ալ առաջ, թուրք բանագնացներ կը թուշին դէպի անդրատլանտեան ափերը «բոյն շինելու» ամերիկեան ղեկավար դէմքերու սրտին եւ մտքին մէջ, արագեւ ճանդիսանալու համար հայկական շար նպատակներուն:

Այսպէս, Եւրոպական Միութեան մօտ Թուրքիոյ աւագ բանագնաց՝ Էկէմէն Պաղըշ Մարտ 15ին Ուաշինկթըն գացած է, կանխելու համար Ապրիլ 24ի առթիւ հայկական որեւէ բանաձեւի օրակարգի բերուիլը:

Պաղըշ Ուաշինկթընի մէջ հանդիպումներ կ'ունենայ Գոնկրէսի Թուրքիոյ Աշխատանքի խմբակի անդամներուն հետ: Ան անգամ մը եւս կը բացատրէ անոնց, թէ բանաձեւին օրակարգի բերուիլը ինչպիսի ժխտական հետեւանքներ կրնայ ունենալ:

Ներկայացուցիչներու Տան նախկին նախագահուհի Նէնսի Փէլոսի բացակայութիւնը բաւական հանգստացուցած է թրքական կողմը: Հետեւաբար, նախորդ տարիներէն շատ աւելի նուազ մտահոգ Թուրքիա մըն է որ կը դիմէ նախագոյշական այս քայլին:

## ՖՐԱՆՍԱ ԳԱՒԱՌԱԿՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՕ-ՏԸ-ՍԷՆԻ ՄԷՋ ԱՋԸ ՊԱՌԱԿՏՈՒԱԾ Է, ՉԱԽԸ ՊԻՏԻ ՓՈՐՁԷ ՕԳՏՈՒԻԼ ԿԱՅՈՒԹԵՆԷՆ

Մարտ 20 եւ 27ին, Ֆրանսայի մէջ տեղի կ'ունենան գաւառակներու (canton) ընտրութիւնները:



Մինչ Աջը պիտի փորձէ պահպանել իր պատմական բերդը, որ Հօ-տը-Սէնի Ընդհանուր Խորհուրդն է, Տէվէճեանի եւ Պալքանիի (այս մէկն ալ աջ) ճակատումը կրնայ նպաստել Չախին: Ընկերվարական կուսակցութիւնը կը յուսայ յաղթանակել խորհրդանշական ութ գաւառակներու մէջ (որոնց մէջ Լըալուա եւ Մոնրուփ), ձեռք անցընելու համար Հօ-տը-Սէն նահանգի մեծամասնութիւնը, նահանգ մը որու Ընդհանուր Խորհուրդին նախագահն է Փաթրիք Տէվէճեան:

Սակայն մամուլին իսկ վկայութեամբ,

Տէվէճեանի բուն մրցակիցը ընկերվարականները չեն, այլեւ Տիկին Իզապէլ Պալքանին՝ իր երդուեալ թշնամիներէն ժան Պալքանիի կինը, որ կը վայելէ նախագահ Սարքոզիի տղուն ժան Սարքոզիի անսակարկ նեցուկը: Տէվէճեան կ'ըսէ թէ վճռակամ է պահպանելու իր աթոռը, մինչ Փ. Սարքոզի Տէվէճեանի համար կ'ըսէ «Ան այլեւս չի գտնուիր իրեն յարմար տեղը»:

Նշենք, որ գաւառակները այն ընտ- (շաբ.ը էջ 4)

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՇԵՐՈՒ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

(շար. Ա. Էջէն)

լու» յանցանքով ամբաստանելով Մարք Կիրակոսն ու Պրայրն Քապաթէքը:

ԽՄԲ. «ՆՅ».- Շատ կարճ պիտի ըլլայ մեր մեկնաբանութիւնը, հարցադրման ձեւով: Չենք գիտեր թէ ասկէ աւելի ցած՝ ո՞ր կարելի է իջնել, ինչ որ ալ ըլլան խնդրին բուն ծալքերը: Զարդարարին քմծիծաղը հոսկէ կը նշմարենք արդէն...:

### ՀԱՅԱՍՏԱՆ

#### ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ

#### ԳՈՐԾՕՆ ԱՆԴԱՄԻ ՄԸ

#### ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

#### ԱՂՄՈՒԿ ԿԸ ՅԱՐՈՒՑԱՆԷ

Մարտ 13ին անձանօթներու կողմէ առեւանգուած է նախկին կռիւմարտիկ, ՀԱԳ-ի գործօն անդամ Սամսոն Խաչատրեան: Աւելի ուշ յայտնի դարձած է, որ առեւանգողները ոստիկաններ են որոնք զինք առաջնորդած են ոստիկանատուն: Մարտ 15ին ան դատապարտուած է երկու ամիս բանտարկութեան, ընդգիծութեան Մարտ 1ի վերջին ցոյցին քաղաքացիական զգեստաւորումով ոստիկաններու հետ վիճաբանած ըլլալու մեղադրանքով:

Այս ձեռքբերումներէն առթիւ Հայաստանի մէջ յարուցուած աղմուկը ԱՄՆ-ու մէջ ալ արձագանգ գտած է. Լոս Անճըլըսի մէջ գործող «Հայ Քաղաքացիական Հասարակութիւն» մարդկային իրաւանց պաշտպանութեան ընկերակցութիւնը այս մասին յայտարարութիւն մը հրատարակած է, դատապարտելով ենթակային ձեռքբերումները եւ պահանջելով անոր անմիջական ազատագրումը:

## NOR HARATCH

Journal trihebdomadaire en langue arménienne  
83, rue d'Hauteville, 75010 Paris  
Téléphone: 01 55 32 06 72  
contact@norharatch.com  
annonces@norharatch.com  
abonnements@norharatch.com

Journal édité par SARL Nor Haratch  
Directeur de publication: Jiraïr Jolakian  
CPPAP: 1110 I 90193  
ISSN: 2105-7672  
Imprimé et distribué par SAS Inter Routage  
49-55, rue des Écoles,  
93321 Aubervilliers Cedex

Prix d'Abonnement annuel (France): 220 €  
Prix d'Abonnement annuel (Hors France): 270 €

## ՖՐԱՆՍԱ ԱՋԸ ՊԱՌԱԿՏՈՒԱԾ Է...

(շար. Ա. Էջէն)

րաշրջաններն են, որոնցմէ իւրաքանչիւրը կ'ընտրէ իր ընդհանուր խորհրդականը նահանգի Ընդհանուր Խորհուրդին համար: Իւրաքանչիւր նահանգի մէջ այդ կարգով ընտրուած ընդհանուր խորհրդականներն ալ ըստ իրենց պատկանած քաղաքական հոսանքին կը կազմեն մեծամասնութիւն ու կ'ընտրեն տուեալ նահանգի Ընդհանուր Խորհուրդի նախագահը:

### ՊԱՐՈՉՕ՝

#### “ՍԹԱԹՈՒՄ-ՔՈՒՅՆ ԼՈՒԾՈՒՄ ՄԸ ՉԷ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ”

Վարչապետ Տրգրան Սարգսեանի գլխաւորած հայաստանեան պատուիրակութիւնը Մարտ 15ին եռօրեայ այցելութեամբ Պրիւքսէլ գացած է: Պատուիրակութեան մաս կը կազմեն կառավարութեան աշխատակազմի ղեկավար Դաւիթ Սարգսեան, տնտեսութեան նախարար Տրգրան Դաւթեան, կրթութեան եւ գիտութեան նախարար Ու Աշոտեան, նախագահի գլխաւոր խորհրդական Արամ Ղարիբեան, արտաքին գործերու նախարարի տեղակալ Կարինէ Ղազինեան, Պելճիքայի մօտ Հայաստանի դեսպան Աւետ Ադոնց, ֆինանսներու նախարարի տեղակալ Վարդան Արամեան եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներ:

Վարչապետ Տրգրան Սարգսեանի հանդիպում ունեցած է Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Խոսէ Մանուէլ Պարոզոյի հետ:

Այս վերջինը ողջունած է առեւտուրի աշխուժացման, ինչպէս նաեւ կառուցներու եւ վարչական համակարգի հզօրացման ուղղուած Հայաստանի ջանքերը:

“Հայաստանի վարչապետին հետ այս հարցերը քննարկել է ետք այն տպաւորութիւնը ունեցայ, որ մեր հայ բարեկամներն ալ գերակայ կը համարին, այն ինչ որ կարելի է գործարարական ու ներդրումի ոլորտներու զարգացման համար” նշած է ան:

Պարոզո աւելցուցած է, թէ Եւրոպական յանձնաժողովը բարեփոխումներու համար պատրաստ է Հայաստանին խորհրդատու աջակցութիւն ցուցաբերելու:

## ՃԱՓՈՆ ՀԻԻԼԷԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ՇՈՒՔԻ ՄԷՋ ԹՈՂՈՒՑ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Մարտ 14ին, Ֆուքուշիմայի աթոմակայանին թիւ 2 հիւլէական բարդն ալ պայթած էր մտահոգութիւնները քիչ մը աւելի սաստկացնելով: Մինչ մէկ կողմէն երկրաշարժին եւ ցիւնամիին գործած աւերներուն հաշուեկշիռը կը կատարւի թէ՛ մարդկային եւ թէ՛ նիւթական կորուստներու առումով, անդին ճափոնական իշխանութիւններուն եւ ընդհանրապէս համայն աշխարհին ակնարկը սեւեռած է հիւլէակայանին վրայ, որմէ շոգագործօն արտածորումները սկսած են լուրջ մակարդակի հասնիլ: Գաղափար



մը տալու համար, նշենք որ ուղղաթիւ մը որ կ'ուզէր մօտենալ թիւ 4 բարդին՝ ջուր թափելով պաղեցնելու համար կայանին վառելանիւթը, չէ կրցած կատարել իր առաքելութիւնը զօրաւոր շողերուն պատճառով: Անոնք արդէն վտանգաւոր աստիճանով սփռուած են կայանին մինչեւ 20 քմ. շուրջը շուրջը: Հարցը հոն է, որ դեռ յայտնի չէ թէ վտանգի ո՞ր աստիճանէն առաջ կարելի պիտի ըլլայ կասեցնել հիւլէակայանին պայթումով յառաջացած վնասները:

Անդին, երկրին հիւսիս-արեւելեան շրջանին մէջ փրկարար գործողութիւնները շատ դժուար պայմաններու մէջ կը կատարուին, քանի ցուրտն ու ձիւնն ալ եկած են քիչ մը աւելի շեշտելու քառասփին վիճակը:

Հայաստանի վարչապետին հետ հանդիպումէն ետք, Պարոզո յայտարարած է. “Եւրոպական Միութիւնը կ'աջակցի զարգացման հակամարտութեան խաղաղ կարգաւորման՝ առանց ուժի կիրարկումի, հողային ամբողջականութեան եւ ժողովուրդներու ինքնորոշման սկզբունքներու հիման վրայ, իսկ սթաթուս-քուօն լուծում մը չէ”:

Պարոզո մտահոգութիւն յայտնած է ի տես շփման գիծին վրայ բազմացող միջադէպերուն, շրջանի սպառազինման:

# ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԱՅԱԴՈՒԼԻ ԴԻՄԱԾ Է

“Ես որեւէ պահանջ չունեմ, ես աւելի շատ ունեմ ակնկալիք: Ժողովուրդն ունի պահանջ վերահաստատել իր իշխանութիւններին ընտրելու իրաւունքը”: Այսպէս յայտնած է «Ժառանգութիւն» կու-



սակցութեան ղեկավար Րաֆֆի Յովհաննիսեան, որ Մարտ 15էն հացադուլի ձեռնարկած է երեւանի Ազատութեան հրապարակին վրայ:

Ինչ կը վերաբերի իր սպասումներուն, Յովհաննիսեան ըսած է թէ կ'ակնկալէ, որ երկրին իշխանութիւնները գործօն քայլեր առնեն Հայաստանը ետ պահելու համարներկայի արտակարգ անդունդէն, եւ երկրորդ, որ ընդդիմութիւնը եւ հանրութիւնը շնան կրաւորական, եւ համագործակցութեան դաշտ ստեղծեն: “Այսպէս շարունակել կը նշանակի դատապարտել երկիրը եւ նոր սերունդներին իրաւազուրկ ապագայի: Ուզում եմ նաեւ իմ համեստ օրինակով ցոյց տալ, որ մեր երկրում փոփոխութիւնների ու քաղաքական արդիւնքների հնարաւոր է հասնել քաղաքացիական ակտիւութեան եւ զըրկանքների միջոցով” շեշտած է ան:

Յովհաննիսեան պատասխանելով լրագրողներու հարցումներուն, ըսած է, թէ իր արարքին պայմանաժամ չէ որոշած. պիտի շարունակէ այնքան ատեն որ մարմինը տոկայ: Առած քայլին արձագանգ չգտնելու պարագային նախատեսուած յաջորդ հանգրուանին մասին հարցումի մըն ալ, ան պատասխանած է թէ առ այժմ չէ որոշած:

Ձինքը այցելելու եկած են ՀՅԴ Երեսփոխան Լիլիթ Գալստեան, ՀԱԳ-էն Ստեփան Դեմիրճեան, Արամ Սարգսեան, Անդրանիկ Քոչարեան, Միասնիկ Մալխասեան, Յովհաննէս Յովհաննիսեան, «Նոր Ժամանակներ» կուսակցութեան ղեկավար Արամ Կարապետեանը, քաղաքացիական խումբեր, Քաղաքագէտներու միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիսեան եւ «Ժառանգութիւն» կուսակցութեան նախկին անդամ, Երեսփոխան Վարդան Խաչատրեան:

## ՄԱՐՍԻԼԻԱ

### ՅՈՅՑ

# ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԱՌՋԵԻ

Շաբաթ, Մարտ 12, ժամը 11ին, Մարսիլիոյ մէջ եւս CCAF-ի կազմակերպած ցոյցը տեղի ունեցաւ, Քաղաքապետարանին առջեւ, Վիէ-Փոռի քարափին վրայ, պահանջելու համար 2006 Հոկտեմբեր 12ին Ազգային ժողովին կողմէ քուէարկուած Յեղասպանութեան ժխտողականութիւնը պատժող օրէնքին Մերակոյտին կողմէ վաւերացումը, որպէսզի ան վերջապէս դառնայ գործադրելի:

Հակառակ փոթորկոտ ու աննպաստ



օրին, 4էն 500 հոգի գնահատուած բազմութիւն մը հաւաքուած էր, որու մէջ 30 տարեկանէն պակասները կը կազմէին ջնջին փոքրամասնութիւն, եւ բոլորովին աննշմար պիտի ըլլային եթէ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ սկառտները համազգեստով, իրենց խմբապետ տղթթ. Րաֆֆի Դիւլանեանի գլխաւորութեամբ ներկայ եղած չըլլային: Եթէ ընդունուած է ըսել, որ հաւաքականութեան մը ապագան իր երիտասարդութիւնն է, այսօրուան օրինակով Մարսիլիոյ հայութեան ապագան շատ փայլուն չ'երեւիր...:

\*\*\*

Ֆրանսական կառավարութեան մէջ կատարուած վերջին փոփոխութեան իբր հետեւանք, Մարսիլիոյ քաղաքապետ, ծերակուտական Ժան-Գլոտ Կօտէն, որ ցարդ Մերակոյտի փոխ նախագահն էր, այդ պաշտօնին աւելցուց Մերակոյտի UMP խմբակցութեան նախագահութիւնը: Ուստի իր քաղաքապետարանին առջեւ տեղի ունեցող ցոյցը նախ իրեն հասցէագրուած էր:

Քաղաքապետը, Շրջանային եւ Նահանգային Խորհուրդներու նախագահները բացակայ էին եւ ներկայացուած էին այլ անձնաւորութիւններով: Բեմահարթակին վրայ տեղ գրաւած

էին Քաղաքային խորհուրդի հայ անդամները, 13րդ-14րդ թաղամասերու թաղապետ Կարօ Յովսէփեան, կցորդ Տիտիէ Բարակեան եւ խորհրդական Փաքալ Շամմասեան. նաեւ ամեն հոսանքէ երեսփոխաններ՝ Ռոլան Պլում, Կի Թէսիէ, Վալերի Պուայէ, Սիլվի Անտրիէօ, Հանրի Ժիպրայէլ, որոնք բոլորն ալ խօսք առին անգամ մը եւս կրկնելով իրենց յանձնառութիւնները Հայութեան նկատմամբ, քաղաքական պատկանելիութենէն անդին՝ իրենց միասնական կեցուածքը թէ՛ ճանաչողական թէ՛ ալ պատժելիութեան օրէնքներու քուէարկութեանց առթիւ, եւ շեշտը դրին որ այժմ «գնդակը կը գտնուի Մերակոյտին կիսադաշտը»: Պլում շեշտեց թէ միշտ պէտք է շարունակել պայքարը: Թէսիէ եւ Ժիպրայէլ խօսեցան անցնող շաբթուան ընթացքին Արցախի նախագահին հետ իրենց տեսակցութիւններուն եւ հայկական երկրորդ պետութեան ճանաչման ի նպաստ տարելիք աշխատանքին մասին:



Երեսփոխան եւ Մարսիլիոյ փոխ-քաղաքապետ Ռոլան Պլում

Հանրահաւաքին թէ՛ բացումը եւ թէ՛ փակումը կատարեց Մարսիլիոյ CCAF-ի նախագահ Յ. Տօնապետեան: Ան վերջիշեց տասը տարի առաջ Յեղասպանութեան ճանաչման ի խնդիր պայքարի օրերը, եւ այդ օրերուն Ժ.-Գ. Կօտէնի իրեն ըրած խօսքը. «Laissez-moi faire et on y arrivera» (“Թողեցէք որ ընեմ ու պիտի յաջողինք”): Զուարթամտութեամբ ալ հարց տուաւ թէ ինչո՞ւ այն օրերուն հարցը յաջողցնելու պատրաստ անձը այսօր կ'անճրկի. եւ անոր վճռակամութեան կոչ ըրաւ ժխտողականութիւնը պատժելու գործին մէջ:

## ARTEXPO ԵՐԵՒԱՆ 2011

Երեւանի Շառլ Ազնաւուրի անուան հրապարակում գտնուող նկարիչների միութեան շէնքում 2009թ. սկսած, ՀՀ Մշակույթի նախարարութիւնը երեք տարի անընդմէջ կազմակերպում է artexpo ցուցահանդէսը, որին մասնակցում են Հայաստանի մշակութային գրեթէ բոլոր մասնաւոր ու պետական ձեռնարկութիւնները, այդ թւում՝ տասնեակ թանգարաններ, յայտնի համերգասրահներ, թատրոններ, յուշարձանների ուսումնասիրմամբ զբա-

արձաններ, հնագիտական յայտնագործութիւններ, կտաւներ ու արուեստի այլ նմուշներ: Այն հանգամանքը, որ մշակութային կառույցներից իւրաքանչիւրը փորձել է ներկայանալ հնարաւորինս իւրայատուկ կերպով՝ ցուցահանդէսին տուել է մի տեսակ հէքեաթային բնոյթ: Դասական երաժշտութեան մեղեդիների ներքոյ մտնելով սրահներից ներս՝ իւրաքանչիւր մարդ ընկնում է մի ուրոյն աշխարհ, որտեղ ներկայացուած են արուեստի բոլոր ճիւղերը. ամենու-

է արձանագրել այն փաստը, որ այցելուների քուէարկութեան արդիւնքում ցուցահանդէսին մասնակցած բոլոր կազմակերպութիւնների միջից այս կենտրոնը զբաղեցրեց պատուաւոր երկրորդ հորիզոնականը: Սա խօսում է բաւական ոգեւորիչ երկու փաստի մասին. նախ կենտրոնի նուիրումը հայկական յուշարձաններին եւ կատարած հսկայ աշխատանքները յուշարձանների ուսումնասիրման, պեղման ու լուսաբանման հարցում արժանացան ամենամեծ գնահատանքին, այն է՝ մշակութասէր հասարակութեան ձայնին: Երկրորդ՝ կարելի է վստահաբար ասել, որ գնալով էլ աւելի է մեծանում հետաքրքրութիւնն ու սրտացաւ վերաբերմունքը հայկական հնագիտական եւ պատմա-ճարտարապետական յուշարձանների հանդէպ:

2011թ. artexpo ցուցահանդէսն իրականացաւ էլ աւելի մեծ շուքով: Բացման հանդիսաւոր արարողութիւնից յետոյ ցուցահանդէսի տաղաւարներն այցելեցին ՀՀ պետական ղէմքերը: Մասնակից կազմակերպութիւնների թիւը զգալիօրէն մեծացել էր: Յուշարձաններով զբաղուող կազմակերպութիւններին յատկացուել էր առանձին մեծ սրահ, որտեղ իրենց ընդարձակ տաղաւարներում հանգրուանել էին 4-5 պետական կազմակերպութիւններ, որոնք իրենց անցած տարուայ փորձից ելնելով էլ աւելի հանգամանօրէն էին պատրաստուել: «Պատմամշակութային ժառանգութեան գիտահետազօտական կենտրոնի» տաղաւարի պատերը ծածկուած էին կենտրոնի կողմից պեղուած մի շարք յուշարձանների պաստառներով: Հնագիտական ուշագրաւ գտածոները, այդ թւում՝ քարէ գործիքներ, նետասլաքներ, մետաղեայ զարդեր, խեցանօթներ եւ այլն,



Յուցահանդէսի սրահը

ղուող հիմնարկութիւններ, կինոստուդիաներ, հրատարակչութիւններ եւ այլն: Այն նպատակ ունի հայ հասարակութեանը ծանօթացնել մշակութային ոլորտներում նուաճումներն ու նորարարութիւնները: Անմիջական կապ է ստեղծուում թէ մշակութային կառույցների եւ թէ հանրութեան ու մշակութային հիմնարկների միջեւ: Այդ իմաստով ցուցահանդէսը ձեռնտու եւ շահաւէտ է երկու կողմերի համար էլ: Այդ է պատճառը, որ նրա ընթացքում հնչում են գործակցութեան բազմաթիւ առաջարկներ, շատերը իրենց աջակցութիւնն են յայտնում այս կամ այն կազմակերպութեանը, կապեր են հաստատուում զանազան լրատուամիջոցների հետ: Ով եղել է ցուցահանդէսի հսկայ դահլիճներում, անշուշտ ականատես է եղել այն եռուզեռի, որ ընթանում է այդտեղ: Աւելի քան յիսուս տաղաւարներում ամեն քայլափոխի կարելի է տեսնել բազմապիսի ուշագրաւ պաստառներ՝ պատուած նշանաւոր հայ արուեստագէտների ու յուշարձանների նկարներով, զանազան

րեք ճոխ գոյներ, լուսային էֆէկտներ, պաստառների միջոցով տեսաֆիլմեր, լուսանկարներ, շարժական տարբեր առարկաներ՝ մի խօսքով աշխոյժ ու հաճելի մթնոլորտ: Այնպէս որ, ոչ մի տաղաւարի մօտով չի կարելի անցնել հպանցիկ եւ չկանգնել, չզարմանալ ու չհիանալ մշակույթի ձեռքբերումներով:

Մշակույթի նախարարութեան «Պատմամշակութային ժառանգութեան գիտահետազօտական կենտրոնը» (տնօրէն՝ Յակոբ Միմոնեան) artexpo ցուցահանդէսին մասնակցում է 2010 թըւականից: Չնայած առաջին անգամուայ մասնակցութեանը եւ փոքր տաղաւարին, կենտրոնը, այնուամենայնիւ, գրաւեց հարիւրաւոր այցելուների ուշադրութիւնը: Մեծ ուրախութեամբ պէտք



Ճարտարապետ Ստեփան Նալբանդեան Ետելը՝ Չիչխանավանքի պատկերները

հանդիսանում էին տաղաւարի զարդը եւ իրենց կողմը գրաւում այցելուների քանակը: Յուցադրուող իրերից յատկապէս մեծ հետաքրքրութիւն էր ներկայացնում Լոռէ բերդի պեղումներից

Չիչխանավանքը:

Չիչխանավանք կոչուող եկեղեցին գտնուում է Լոռու մարզի Սպիտակի ենթաշրջանում, Սպիտակի երկրաշարժի էպիկենտրոն հանդիսացող Շիրակամուտ գիւղում: Այն 7րդ դարի խաչաձև յատկազօով կենտրոնազմբէթ եկեղեցի է: Այստեղ հնագիտական աշխատանքներն իրականացուել են 2008թ. փարիզում Փարիզում գործող «Երկիր եւ Մշակոյթ» կազմակերպութեան մեկենասութեամբ եւ աջակցութեամբ: Կազմակերպութիւնը նպատակ ունենալով վերականգնել վաղ միջնադարեան այս եկեղեցին,



Հնագէտ Արման Նալբանդեան

գտնուած մետաղեայ թիթեղը՝ Փարիզի քաղաքագլխի մակագրութեամբ: Տաղաւարն բոլոր առումներով գերազանցում էր նախորդ տարուայ տաղաւարին եւ համեմատական կարգով այս տարի պէտք էր արժանիօրէն զբաղեցնէր առաջին տեղը, սակայն այս անգամ ցուցահանդէսն իրականացուում էր առանց քուէարկութեան սկզբունքի: Կենտրոնն այս տարի ներկայացնում էր 2010թ. հնագիտական աշխատանքներ իրականացուած այնպիսի նշանաւոր համալիրներում, ինչպիսիք են Շէնգաւիթ վաղ բրոնզէդարեան քաղաքատեղին (Երեւան), Վերին եւ Ներքին Նաւեր դամբարանադաշտերը (Արագածոտնի մարզ, Աշտարակի շրջան), Լոռէ միջնադարեան բերդաքաղաքը (Լոռու մարզ, Ստեփանաւանի շրջան), Կերէնի դամբարանադաշտը (ԼՂՀ, Քաշաթաղի շրջան):

նախապէս պատուիրում է վերջինիս պեղման եւ ուսումնասիրման աշխատանքները: Երեք տարի անընդմէջ կատարուած պեղումների արդիւնքում հետըզհետէ հողից դուրս եկան եկեղեցու հնագոյն պատերը եւ հիմքերը, որոնց հետ էլ զանազան յայտնագործութիւններ: Չիչխանավանքում կատարուած գիտական աշխատանքները մեծ ճանաչում բերեցին վանքին եւ իրարանցում առաջացրին հայ հնագէտների եւ ճարտարապետների շրջանում: Պեղումներից յայտնաբերուեցին հայերէն, արաբերէն, արամերէն արձանագրութիւններ, հաւասարաթե խաչի հարթաքանդակներ, ձիթաճրագներ, կրակարան, նետասլաք, մետաղադրամ եւ այլն, եկեղեցու եւ նրա շուրջը իրականացուած պեղումների մասին նկարահանուեց տեսաֆիլմ, գրուեցին մի քանի առանձին հաշուետուութիւններ, նախապատրաստուում է ընդհանրական ծաւալուն յօդուած: Վանքի ուսումնասիրութիւնն այսպիսով զրուեց լուրջ գիտական մակարդակի

Այս յուշարձանների կողքին այս տարի ներկայացուեց եւս մի պատմաճարտարապետական եւ հոգեւոր արժէք՝



Չիչխանավանքի հնութիւնները

վրայ, որի խորհրդատուն է կենտրոնի տնօրէն, հնագէտ Յակոբ Միմոնեանը: Բացի հնագէտներից պեղումներին մասնակցեցին նաեւ տեղացիներից կազմուած բանուոր-պրեպարատորների ջոկատը, արտասահմանից ժամանած «Երկիր եւ Մշակոյթ» կազմակերպութեան» կամաւորների խումբը, ինչպէս նաեւ ճարտարապետ՝ «Երկիր եւ Մշակոյթ»ի վարչութեան անդամ Ստեփան Նալբանդեանի զխաւորած ամրակայման աշխատանքներով զբաղուող խումբը: Եկեղեցին չափազրեցին ճարտարապետներ Յովհաննէս Սանամեանը, Ս. Նալբանդեանը եւ Ա. Յակոբեանը: Գտածոները ենթարկուել են մանրամասն տիպաբանական դասակարգման, իսկ թանգարանային նմոյշները տարրալուծարանում մշակուել եւ վերանորոգուել են:

Այսպիսով Չիչխանավանքն artexpo 2011-ում նոյնպէս ունեցաւ մեծ յաջողութիւն: Համաձայնութիւն ձեռք բերուեց պեղումների վերաբերեալ հետուտահաղորդում պատրաստելու մա-



Չիչխանավանքը ուսերէն մամուլին մէջ

սին: Նախատեսուում է այս տարի շարունակել հնագիտական աշխատանքները՝ յուսալով հիմք պատրաստել նրա վերականգնման համար: Բազմաթիւ այցելուներ իրենց խորին յարգանքն ու շնորհակալութիւնը յայտնեցին այս ազգանուէր գործի նախաձեռնողներին, աջակցողներին եւ բոլոր մասնակիցներին:

Չիչխանավանքի հնագիտական աշխատանքների գիտական ղեկավար՝ ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ Չիչխանավանքի վերականգնող ճարտարապետ, «Յուշարձանները վերականգնող ճարտարապետների հայկական ընկերակցութեան» փոխնախագահ՝ ՍՏԵՓԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ 2011թ. Մարտ 6

# «ԱՆԵՂ ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ, ԹԷ ՉԱՆԵԼ»

## ԿԱՄ

### ԱՐԱ Խ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՑՆՑԻՉ ՅՕԴՈՒԱԾԱՇԱՐՔԸ՝ ՈՒՂԵՅՈՅՑ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

Բ.

#### ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՌԱՍՊԵԼ

Այս մէկը կը վերաբերի հանգանակաւ գումարներուն որպէս հեռատեսիլի մարաթոնի ծախք՝ պահ գրուելուն: Այս մասին որպէս հերքում Քոթանճեան ըսած է, թէ ընդհանուր առմամբ, հեռատեսիլի մարաթոնը կը կազմակերպուի հովանաւորներու մեկենասութեամբ, աւելցնելով՝ «ամեն մէկ տղար որ կը տրուի հեռատեսիլի մարաթոնի ընթացքին, կ'երթայ ծրագրերուն»:

Տրուած այս հերքումին ալ որպէս մերկացում, Մանուկեան կ'ըսէ հետեւեալը. ճիշդ է որ գումարներու մեծ մասին հեռատեսիլի մարաթոնի կազմակերպչական ծախսերուն տրամադրուելու մասին պնդումները չափազանցուած են, բայց Քոթանճեանի ըսածն ալ ճիշդ չէ: Կ'աւելցնէ թէ այս առասպելին շրջաժիրին մաս կազմող որոշ պնդումներու ենթադրութիւնը կը նոյնանայ առաջին մասին մէջ նշուածին հետ, իմա՝ նուիրատուութիւնները անձնական շահերու ծառայեցնելու գանձանակներու հետ: Այս թեման կը կապէ նաեւ յաջորդ առասպելին:

#### ՎԵՅԵՐՈՐԴ ԱՌԱՍՊԵԼ

Որպէս վեցերորդ առասպել, Քոթանճեան նշած է այն պնդումները, ըստ որոնց՝ մարաթոնին առթիւ մեծ թիւով պաշտօնեաներ կու գան Հայաստանէն, մեծ ծախսերու դուռ բանալով: Այս մասին ԱՄՆ-ու արեւմտեան շրջանի գործադիր տնօրէնը կ'ըսէ որ ասիկա բոլորովին շինծու տեղեկութիւն է: «Օրինակի համար, այս տարի (խօսքը 2010ի համար է - ՅԿ) կու գայ 5 հոգի, որոնց մէջ է Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահը՝ Բակօ Սահակեանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանը, գործադիր տնօրէն Արա Վարդանեանը: Ընդամենը 5 կամ վեց հոգիի մասին է խօսքը: Եւ այդ ծախսերը եւս մաս կը կազմեն այն 7%ին, որու մասին մենք խօսեցանք վերեւ»: Կ'ըսէ թէ ճիշդ է որ մարաթոնի ծրագրին մասնակցելու համար կու գան երգիչներ, որոնց ճամբու եւ պանդոկի ծախսերը կը դիմագրաւուին հինգ օրուան համար,

սակայն պէտք չէ մոռնալ որ անոնք կ'երգեն անվճար, աւելցնելով՝ «...եւ այս ծախսերը եւս կը մտնեն հեռատեսիլի մարաթոնի ծախսերուն մէջ, որոնք արդէն մեր հովանաւորներուն միջոցով ընդհանրապէս փակուած են»:

Այս հարցին Մանուկեանի կողմէ մերկացման փորձը կը կայանայ մարաթոնին առթիւ, ըսուածէն աւելի մեծ թիւով անձերու ԱՄՆ գացած ըլլալու փաստին մէջ: Կ'ըսէ թէ մարաթոնէն քանի մը օր վերջ Արցախի նախագահին շրջանակներուն մօտեցած է նախագահ Բակօ Սահակեանին հասցէագրուած նամակ մը յանձնելու համար: Այդ առթիւ ծանօթացած է քանի մը հոգիի հետ, որոնք նոյնպէս մաս կազմած են Լուս Անճըլըս ճամբորդած պատուիրակութեան: Կ'աւելցնէ. «Եթէ ճիշդ է պնդումը, որ միայն 5-6 հոգու ծախսն է հիմնադրամը հոգացել, ապա ստացում է, որ կա՛մ Արցախի նախագահի թիկնապահներն իրենց գրպանից են վճարել ճանապարհորդութեան համար, կա՛մ էլ Արցախի պուտճէն է փակել նրանց ճանապարհորդութեան եւ հիւրանոցի ծախսերը»: Ապա դիտել կու տայ նաեւ թէ Քոթանճեան նախ կը խօսի 4-5 օրուան ծախսեր դիմագրաւելու մասին, վերջն ալ կ'ըսէ թէ այդ ծախսերը կը հոգան հովանաւորները: Կրկին կու տայ թերթերու արձագանգներ, մատնացոյց ընելու համար հակասութիւններ, մասնումներ:

#### ԵՕԹՆԵՐՈՐԴ ԱՌԱՍՊԵԼ

Սարգիս Քոթանճեան որպէս եօթներորդ առասպել ներկայացուցած է. «Իբրեւ թէ մեծ գումարներ կը յայտարարուին, բայց իրականութեան մէջ անոնք չեն հանգանակուիր հեռատեսիլի մարաթոնի ընթացքին»: Այս պնդումին դէմ Քոթանճեանի հերքումի խօսքը եղած է հետեւեալը. «Այս ալ սուտ է: Հեռատեսիլի մարաթոնին օրը յայտարարուած գումարներուն 95%ը կը հանգանակուի: Ընդամենը 5 տոկոսն է, որ չենք կրնար հաւաքել: Ասոր ալ պատճառը յաճախ թէքնիք հարցեր են: Այսինքն՝ անձը փոխած է իր հասցէն, փոխադրուած է այլ տեղ, առանց հասցէն թողելու: Կամ

ալ համակարգչային մեր դրուիթեան մէջ նոյն գումարը երկու անգամ երեւցած է: Խօսքը 5%ի մասին է: Յայտարարուած գումարներու 95%ը կը հանգանակուի քանի մը ամսուան ընթացքին»:

Մանուկեան հոս եւս կը բերէ տուեալներ, ջրելու համար Քոթանճեանի հերքումը: Կը յիշէ Հիմնադրամի գործադիր յաջորդական տնօրէններ Վահան Տէր-Ղեւոնդեանի, Նայիրա Մելքումեանի թերթերու կատարած յայտարարութիւնները, ուր անոնք գանգատ կը յայտնեն նուիրատուներու խոստումազանցութեան մասին: Իսկ 2005ին մինչ Հիմնադրամը յայտարարած է 7,7 միլիոն տոլարի հանգանակութիւն, քանի մը ամիս վերջ ստիպուած է խոստովանիլ որ յաջողած է այդ գումարին հազիւ 5 միլիոնը հաւաքել, ինչ որ սկզբնական գումարին 35%ը կը հանդիսանայ, այսինքն Քոթանճեանի նշած 5%էն շատ հեռու տոկոս մը: Ապա կը յիշէ 2007-2008 ժամանակաշրջանին Հիմնադրամին գործադիր տնօրէնութիւնը ստանձնած Վահէ Աղաբէկեանի «Հետք»ին տուած հարցազրոյցէն հատուածներ: Աղաբէկեան 2008ի դրամահաւաքին ձախողութեան որպէս բացատրութիւն տուած է բարերարի մը օրինակը, որու գործերը ֆինանսական միջազգային տագնապին ազդեցութեան ենթարկուած են: Մինչ նուիրատուութեան խոստումի պահուն իր ընկերութեան բաժնետոմսերը 900 միլիոն տոլար արժէք կը ներկայացնէին, կարճ ժամանակուան մէջ անոնք արժեզրկուած են մինչեւ 150 միլիոն տոլարի. այդ ալ բնականաբար արգելք հանդիսացած է որ կարենայ յարգել կէս միլիոն տոլար նուիրելու իր խոստումը:

Լրագրողը, հանգանակուած գումարները եղածէն աւելի ցոյց տալու Հիմնադրամին ջանասիրութիւնը կը բացատրէ հետեւեալ անձնական օրինակով:

«Կայ մէկ այլ մեխանիզմ, որը «Հայաստան» համահայկական հիմնադրամը լայնօրէն կիրառում է մեծ թուեր ցուցադրելու նպատակով: 1996 թ. «Մոնթէ Մելքոնեան» հիմնադրամի Լուս Անճըլըսեան գրասենեակի հետ կապուեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը՝ խնդրելով նուիրաբերել այն գումարը, որը նախատեսուած էր «Մոնթէ Մելքոնեան» հիմնադրամի երեւանեան գրասենեակի համար, եւ հաւաստելով, որ նոյն գումարը կը վերագարձուի երեւանում: Այս քայլով ցուցադրուելու էր աշխարհին, թէ Սփիւռքից ինչքան օգնութիւն է ուղարկուած Հայաստան եւ Արցախ: Որպէս «Մոնթէ Մելքոնեան» հիմնադրամի այն ժամանակուայ նախագահ էս ներկայ գտնուեցի 1996 թ. հեռու-

տամարաթոնին, յանձնեցի 3.000 տղա-  
րի չէքը եւ խօսեցի հայրենիքի ու «Հա-  
յաստան» համահայկական հիմնադրա-  
մին մեր օժանդակութեան մասին՝ քաջա-  
լերելով մարդկանց կատարել նուիրա-  
տուութիւն: Յետագայում ինձ յայտնի  
դարձաւ, որ Գրոզ Գրիգորեանի «Լինսի»  
հիմնադրամը, որը կրկնապատկում էր  
«Հայաստան» համահայկական հիմնա-  
դրամին ուղղուած իւրաքանչիւր նուիրա-  
տուութիւն, կրկնապատկել էր նաեւ մեր  
«նուիրատուութիւնը»՝ յաւելեալ 3.000  
տղար ներդնելով համահայկական հիմ-  
նադրամի հաշուի վրայ: Կարող եմ մի-  
այն պատկերացնել, թէ քանիսին է նմա-  
նատիպ խնդրանքներով դիմել «Հայաս-  
տան» համահայկական հիմնադրամը”:

**ՈՒԹԵՐՈՐԴ ԱՌԱՍՊԵԼ**

Առասպելներու շարքին ութերորդը  
հանդիսացած է այն, որ “Իբր թէ Հայաս-  
տանցիները չեն մասնակցիր հեռատեսի-  
լի մարաթոնին: Հայաստանցի ըսելով  
կ’ակնարկուի մեր հայրենակիցներուն,  
որոնք Հայաստանէն եկած են Լոս Անճը-  
լլոս կամ ընդհանրապէս Ամերիկա”:

Այս առասպելին որպէս հերքում  
Պարոն Քոթանճեանի կողմէ բերուած  
առաջին դիտողութիւնը այն եղած է,  
որ Հայաստանցի Հայերը ամենէն  
մեծ բարերարներն են, նախ եւ առաջ  
անոր համար որ Հայաստան ապրող  
իրենց ընտանիքներուն կ’օգնեն: Եւ  
այդ՝ «Հայաստան» Համահայկական  
Հիմնադրամին բերած իրենց օժանդա-  
կութենէն անկախ: Աւելցուցած է, որ  
ատոր զուգահեռաբար, Հայաստանցի-  
ները կը մասնակցին նաեւ Հիմնադրամի  
հանգանակութիւններուն եւ կը կազմեն  
նուիրատուներու 40%ը:

Ասոր որպէս մերկացում յօդուածին  
հեղինակը կ’ըսէ թէ Հայաստանցիներու  
իրենց ընտանիքներուն բերած շարու-  
նակական օգնութեան մասին պիտի խօ-  
սի իր գրութիւններու շարքին երրորդին  
մէջ: Բայց բացի մեր կողմէ վրիպումէ  
մը, այդ մասին խօսք չէ եղած Գ. մասին  
մէջ:

Իսկ ինչ կը վերաբերի նուիրատուներու  
մէջ Հայաստանցիներու 40% տոկոս  
կազմելու մասին Պ. Քոթանճեանի պնդու-  
մին, յօդուածագիրը կ’ըսէ, թէ Հայաս-  
տանէն եւ Արցախէն արձանագրուած  
մուտքերուն մէկ մասը պետական  
հաստատութիւններուն եւ պետական  
ուսումնական հաստատութիւններուն  
ղեկավարութեանց կողմէ պարտա-  
դրուած նուիրատուութիւններ են: Կը  
սկսի օրինակ մը բերելով Արցախէն,  
աւելցնելով թէ ունի բազմաթիւ ուրիշներ  
ալ. “Արցախում էի ապրում, ճանաչում

**ՓԱՐԻԶԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ  
ԱՊՐԻԼ 23Ի ՀՍԿՈՒՄԻՆ  
«7-ԵՐՈՒ ԵՐԵԿՈՅԹԸ»**

Շաբաթ, Մարտ 3ին, Փարիզի «Ալէք  
Մանուկեան» Մշակութային կեդ-  
րոնին մէջ տեղի ունեցաւ «7-երու  
երեկոյթը»:

Նախ երկու խօսք կազմակերպիչնե-  
րուն մասին:

1998էն ի վեր հայ երիտասարդական  
կազմակերպութիւնները այս երեկոյթով  
քով քովի կու գան, պատրաստելու  
համար Փարիզի Ապրիլ 23ի հսկումը:  
Անոնք են ԳՕՓէԱ-ն, ՏԱ-Գոնէքսիոնը, ՀՅԴ

ցութեանց ներկայացուցիչներ, քաղա-  
քական դէմքեր. այդ գիշեր անոնք կար-  
գով բարձրացան բեմ, կարգով իրենց  
գորակցութիւնը յայտնելու համար Հայ  
Դատին: 2010ի հսկումը վայելեց ֆրան-  
սահայ ծանօթ երաժիշտ, հեռատեսիլի  
«Նուվէլ Սթար» երաժշտական մրցումի  
դատակազմի անդամ Անտրէ Մանուկ-  
եանի հովանաւորութիւնը:

Թերեւս ձեզմէ շատեր գայթակղելով  
հարց տան թէ զուարճութեան այս



նոր Սերունդը, ՀՄԸՄ-ը, Փարիզի ԺԱՅ-ը,  
Նազարպէքը, Հայ երիտասարդներու  
Քրիստոնեայ Միութիւնը (ԱՄՅ) եւ  
ՀԲԸՄ-ի երիտասարդական միութիւնը:  
Այդ հսկումին, որ անցեալ տարի տեղի  
ունեցաւ Փարիզի Հանրապետութեան  
հրապարակին վրայ, եւ որուն ներկայ  
եղաւ աւելի քան 3000 հոգի, մասնակ-  
ցեցան մտաւորականներ, ընկերակ-

երեկոյթը ի՞նչ կապ կրնայ ունենալ  
Հսկումին հետ: Բայց այդ երեկոյթը  
առիթ մըն է Փարիզեան Շրջանի հայ  
երիտասարդներուն, ցոյց տալու համար  
թէ պատրաստ են բերելու իրենց նեցուկը  
Ֆեդասպանութեան յիշատակումին եւ  
իրենց մասնակցութիւնը բերելու Ապրիլ  
23ի Հսկումի երեկոյթին:

Շուրջ 300 երիտասարդներ ներկայ

էի մի կնոջ, ով աշխատում էր Արցախի  
նախագահի աշխատակազմում: 2003  
թ. նա բացայայտորէն հրաժարուել էր  
թոյլ տալ իր աշխատավարձից պա-  
հում անել, որը ենթադրաբար պէտք  
է փոխանցուէր «Հայաստան» Համա-  
հայկական Հիմնադրամին իբրեւ կա-  
մաւոր նուիրատուութիւն: Այն ժամանակ  
ԱԺ նախագահ եւ այժմ Ռուսաստանում  
Հայաստանի դեսպան Օլեգ Նսայեանը,  
ում վստահուած էր պարտադիր նուի-  
րատուութիւնների հաւաքագրումը,  
կարգադրել էր պահումների համար  
համաձայնութեան ստորագրութիւններ  
հաւաքող իր աշխատակցին ստորագրել  
այդ կնոջ փոխարէն”:

լակերպը լայնօրէն կիրարկուած է նաեւ  
Հայաստանի մէջ: Կը յիշէ 2003ին դպրոցի  
մը աշակերտներէն պարտադրաբար  
դրամ հաւաքելու փորձը, մանկատունէ  
մը դրամ պահանջելու օրինակը, այդ  
արարքէն գայթակղած՝ Հիմնադրամի  
հանրութեան հետ կապերու բաժնի վա-  
րիչ Տիգրան Պասկելիեանի ստորա-  
գրած պարսաւական գրութիւնը, 2007ին  
Հանրային հեռատեսիլի ընկերութեան  
աշխատակիցներու աշխատավարձ-  
երուն 10%ին հիմնադրամի կարիք-  
ներուն համար պահ գրուելը եւլն.:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿՈՊԷԼԵԱՆ

(Ծար • 2)



## ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏ

Պոլսոյ մէջ Մարտ 11ին տեղի ունեցած թուրի միջազգային մրցաշարքին Ռուսաստանէն 17ամեայ Եանա Եգորեան, որ 100 մասնակիցներուն ամենէն երիտասարդն էր, նուաճեց պրոնզեայ մետալ: Շաբաթ մը առաջ, Քիելի մէջ, պարմանուհիներու «Ոսկէ դուռ» մրցաշարքին գրաւած էր համեստ 9րդ տեղ մը:



## ԸՄԲԵՍԱՄԱՐՏ

Իրանի Քոմ քաղաքին մէջ, Մարտ 5-6ին տեղի ունեցած յունա-հոռմէական ոճի միջազգային մրցաշարքին Հայաստան մասնակցեցաւ վեց ներկայացուցիչով: Ութ երկիրներէ մասնակիցներու մէջ, հայաստանցի մարզիկներուն լաւագոյնը հանդիսացաւ Վահրամիշապուրեան (60 քկ.), որ դասուեցաւ երրորդ, արժանանալով պրոնզեայ մետալի: Նոյն դասակարգին մէջ Արտակ Յարութիւնեան 5րդ տեղը գրաւեց, մինչ Ռոպէր Կիրակոսեան ալ 55 քկ. դասակարգին մէջ հանդիսացաւ 5րդ. Գէորգ Սահակեան ալ (66 քկ.) գրաւեց 8րդ տեղը:

Նոյն օրերուն, Հունգարիոյ մէջ տեղի ունեցած յունա-հոռմէական ոճի Մեծ Մրցանակին, Ղազարխատանի խումբը, որուն մարզիչներն են Պախիճյար Պայսէյիտով եւ Միխիթար Մանուկեան, շահեցաւ առաջնութիւնը որու ընդամենը շորս ներկայացուցիչները բարձրացան պատուանդան, երեքը խլելով ոսկի մետալներ: Հակառակ անոր որ Միխիթար Մանուկեան գիւմրեցի է, Ղազարխատանի

եղան այդ երեկոյթին: Դեռ շատեր ալ մնացին դուրսը, սրահին ընդունելութեան կարողութեան պատճառով: Արդէն այդ երեկոյթին իրենց ներկայութեամբ իսկ մասնակցած եղան Հսկումի պատրաստութիւններուն, քանի հասոյթը կը տրամադրուի անոր ծախսերուն:

Ապրիլ 23ի Հսկումին պատրաստութիւնը տարուան մը աշխատանք կը պահանջէ: Ընկերակցութիւններու անդամ երիտասարդները իրենց մաս կազմած միութիւններուն գործունէութիւններուն զուգահեռաբար կը տանին Հըսկումի պատրաստութեան աշխատանքները, նպատակ ունենալով ուժեղ պատգամ մը փոխանցել հանրութեան. այն է Յեղասպանութեան յիշատակը յաւերժացնելու եւ ժխտումին դէմ պայքարելու վճռակամութիւնը:

ԳԱՐԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ

դրօշին տակ է, որ 2003ին շահած էր ախոյեանութիւնը Համաշխարհային Բաժակի ի հաշիւ մրցաշարքի մը, 2004ի Աթէնքի ողիմպիականներուն ալ նուաճած էր պրոնզեայ մետալ:



## ՄԱԳԼՅՈՒՄ

Սառույցի վրայ մագլցումի Համաշխարհային Բաժակի շորորդ եւ վերջին մրցումներուն, որոնք տեղի ունեցան Մարտ 6էն 8, Ռուսաստանի Քիրով քաղաքին մէջ, Ռուսաստանէն Լուսմիլա Պատալեան գրաւեց 6րդ տեղը 25 մասնակիցներու մէջ (անցեալ տարի 2րդ աւարտած էր): Ընդհանուրդասարման մէջ գրաւեց 7րդ դիրքը, մինչ անցեալ տարի աւարտած էր 6րդ, իսկ նախանցեալ տարի 11րդ: 33ամեայ Պատալեան ի հաշիւ այս տարուան Համաշխարհային բաժակին, Զուիցերիոյ մրցումը աւարտած էր 4րդ, Գորէայինը՝ 12րդ, իսկ Ռումարիայինը՝ 9րդ:



## ՖՈՒԹՊՈՒԼ

Հայաստանի աղջկանց հաւաքականը յաջողեցաւ անցնիլ նախագտման փուլը, կարենալ մասնակցելու համար 2013ի եւրոպայի ախոյեանութեան գտման մրցումներուն: Հայրենի խումբը, Մարտ 3էն 8, Մալթայի մէջ երեք մրցում խաղաց, որոնցմէ դուրս եկաւ առանց դոյզն պարտութեան: Հայաստանցի օրիորդները Մալթայի հետ 1-1, Վրաստանի հետ 0-0 հաւասար արդիւնքներ արձանագրելէ ետք Ֆէրոյէ կղզիները 1-0 պարտութեան մատնելով աւարտեցին իրենց խմբակին առաջին տեղը: Մարտ 14ին տեղի ունեցաւ գտման խմբակները ճշդող

վիճակահանութիւնը: Հայաստան մաս կը կազմէ 7րդ խմբակին, Դանիոյ, Չեխիոյ, Աւստրիոյ եւ Փորթուկալի հետ: Մրցումները տեղի պիտի ունենան 2011 Սեպտեմբերէն 2012 Սեպտեմբեր: 11 լաւագոյն հաւաքականները, կազմակերպող երկրի՝ Շուէտի հաւաքականին հետ պիտի մասնակցին վերջնական փուլի մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան 2013 Յուլիս 10էն 28:



## ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

~Ճամեայ Ալեքսանտր Տիւրկէրեան, Մարտ 5ին Փարիզի մէջ տեղի ունեցած Ֆրանսայի ծանրաբարձութեան ախոյեանութեան 85քկ. դասակարգին 5րդ տեղը գրաւեց, ընդամենը բարձրացնելով 284 քկ.: Մարմնական պատրաստութեան մասնագէտ, Վօ ան Վըլէնի ակումբի բաժնետէր, Տիւրկէրեան 2010 Մարտին, 94 քկ. դասակարգին մէջ դարձած էր Ֆրանսայի փոխ ախոյեան:



## ԺԻՒՏՕ

Պրէսիւրիի (Տէօ-Սեւր նահանգ) մէջ Մարտ 5ին տեղի ունեցած Ֆրանսայի կրտսերներու մրցաշարքին, Ռուսաստանէն Դագիկ Զաքարեան (-60 քկ.) 2րդ տեղը գրաւեց, իսկ Փուլթիէն Սարգիս Նաւասարդեան դարձաւ 3րդ 66 քկ. դասակարգին մէջ, Բ. շրջանին պարտութեան մատնելէ ետք Ռուսաստանէն Արթիւր Աղայեանը: Այլ ռուսահայ մարզիկ մը, Աշոտ Սամսոնեան մրցաշարքէն դուրս մնաց Ա. շրջանէն իսկ:

ԵՂՈՒՄՆԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

**Յարութիւն Պարտէզը**  
**Jardin d'Arthur**  
 Spécialités  
 Arméniennes & Libanaises  
 Restaurant & Traiteur  
 Sur place Salon de Thé A emporter  
**Tél. : 01 56 29 31 40**  
**Tél. : 06 76 13 71 48**  
**121 Etienne Dolet 94140 Alfortville**  
 Mail : [jardinarthur@hotmail.fr](mailto:jardinarthur@hotmail.fr) / Côté 2 rue de Madrid



# ՎԵՐՋԻՆ ԱՆՄԵՂԸ

## ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Մակարը դեռ Մակարն էր: Կրնար այդպէս խօսիլ: Ընկեր Վարդանին համար դեռ կանուխ էր բացէ ի բաց ճակատիլ: Ռազմագիտական նահանջ մ'ըրաւ, յանձն առաւ, սասունցիներու արտաքսուածը առկախել, նոր քննութիւն բանալ եւ ապա Բիւրոյի լիակատար մէկ նիւստին մէջ որոշում տալ: Երկու քննիչներ զըրկուեցան Սուրիա, ամիսներով մնացին եւ հսկայ թղթածրար մը կազմած վերադարձան Եգիպտոս, մինչ անդին, Հալէպի փողոցներուն մէջ Այնթապ-Մասուն պայքարը, ակումբներէն դուրս ելած, կը մղուէր դաշոյններով եւ ատըրճանակներով...

Աւելորդ յոգնութիւն էր սակայն քննիչներու երթեւեկը: Ընկեր Վարդան դատաւորի այն տեսակն էր, որ նախ պատիժը կու տայ եւ յետոյ միայն պատիժը արդարացնող յանցանքը կը փնտռէ: Եւ... կը գտնէ:

Եթէ կ'ուզես մէկը անպայման յանցապարտ վիճակի մէջ տեսնել, բացայայտօրէն անիրաւու գրգռիչ վերաբերում մը ցոյց տուր: Իր բնական ընդվզումը անարդարութեան դէմ, ուշ կամ կանուխ ենթական պիտի մղէ այլապէս դատապարտելի արարքներու եւ նովին բանիւ արդարացնէ կանխակալօրէն անարդար վերաբերումը: Մնաց որ, սասունցիներու պարագային մեծ դժուարութիւն մը չունէր ընկեր Վարդան: Լեռնականի անոնց պարզունակ խառնուածքը, ճկունութենէ զուրկ եւ հակազդեցութիւններով անմիջականօրէն բիրտ, դժուար կը հանդուրժէին կազմակերպական սեղմումները, դուրաւ իյնալու համար կանոնագրային պատիժներու տրամադրութեան տակ: Մակար ի զուր կը ճգնէր այս ամենը բացատրել Վարդանին, բայց միւսը անխորտակելի վահանի մը պէս առաջ կը բռնէր Կուսակցութեան կանոնագիրը:

Եղաւ պահ մը, ուր Մակար, պաղարիւնը կորսնցուցած, դաստակով ամուր զարկաւ Վարդանին ձեռքը գտնուող կանոնագիր-տետրակին, մէկ կողմ նետեց եւ գոչեց.

– Գետի՛ն մտնի կանոնագիրդ: Մենք

Մասունի լեռներուն կանոնագրով չկըրուեցանք: Ամեն անգամ որ կանոնագիրը մէջտեղ հանեն, նեխանքի հոտ կ'առնեն մշուրջս...

Անօգուտ: Մակար մինակ մնաց: «Ընկեր Մակարի Բիւրօն» դարձած էր «ընկեր Վարդանի Բիւրօն»: Այս վերջինին ցուցմունքով ներս առնուած անդամները ուրիշ բան չէին, եթէ ոչ միայն «այո» ըսելու համար աթոռ գրաւող մարդիկ, բոլորն ալ ընկեր Վարդանին արարածները, զուրկ անձնական կարծիքէ, եւ ժամանակը ցոյց պիտի տար, նաեւ, անհատական նկարագրէ: Անոնց ակնարկելով, Եգիպտոսէն մեկնելէ առաջ Մակար կերպով մը վրէժ լուծած ըլլալ կարծեց ակուսներուն մէջէն մտըրուալով Վարդանին.

– Հասկցայ ոսկի ընկերներդ: Ոսկի փրօսթաթ ունի մեր Բիւրօն...

Ձայրոյթէ աւելի զզուանք կար Մակարի հոգիին մէջ: Դաւաճանութիւնը, ընկերական վատութիւնները նոր չէին իրեն համար: Շատ տեսած էր: Երկար ու փոթորկալի կեանքի մը փորձառութիւնը սորվեցուցած էր իրեն երբեք չհաշուել մարդոց երախտագիտութեան վրայ: Վարդանի մը ապերախտութիւնը չէր որ անակնկալ մը պիտի կազմէր: Այդ ուռուցիկ շաղակրատէն խաբուած ըլլալու գիտակցութիւնն էր որ կը տառապեցնէր զինք, իրեն անվայել արարքի մը մէջ գտնուած ըլլալու ամօթապարտութեամբ: Ինչ խոնարհ, ինչ յարգալի կծկուեցաւ իր շուքին ներքեւ, սահուն օճառ դառնալու համար ոտքերուն տակ:

Յիշեց թիւ մէկ Արշակին զգուշացումը, Վարդանը մօտէն ճանչցող միակ անձը, Թիֆլիզ-Երեւանէն մինչեւ Պարսկաստան:

– Միալ կ'ընես, Մակար, կարելի չէ վստահիլ Վարդանին: Գառան մայիւնով կը մօտենայ, ծոցդ առի՛ր գայլ է...

Եւ ընտրութենէն ետք, երբ այլեւ Վարդանը «ծոցն էր», Արշակին յաւիտենական այլբանութիւններէն մէկը, միշտ կենդանիներով:

– Լսիր, Մանար, իժը մի օր կը հանդի-

պի գորտին, մի գետի ափը եւ կ'ասի.

– Խնդրում եմ, ինձ այն կողմ տար, դու լող տալ գիտես, ես ոչ:

– Բայց դու իժ ես, թոյն ունես, կը խայթես:

– Երգում եմ իմ բոլոր թոյներով, ապաշխարել եմ, այլեւ չեմ խայթում:

Միամիտ գորտը հաւատում է, առնում է իժը ուսին եւ մտնում ջուրը: Ճամբակէսին, գետի միջտեղերքը, իժը ասում է.

– Իմ բարերար, կը ներես, պէտք է կծեմ:

– Բայց դու ասացիր հրաժարուել ես այդ վատ արարքից:

– Ի՛նչ անեմ, իմ բնութիւնը ստիպում է, չեմ կարող չխայթել:

– Որ այդպէս է, ասում է գորտը խելքի ընկած, իմ բնութիւնն էլ ստիպում է որ մէկ մէկ սուզուեմ ջուրի յատակը:

Ու թաղուելով, խեղդում է իժին:

Աղեքսանդրիայէն Հայֆա մեկնող շոգենաւի մը կամրջակին վրայ, ճակատը շփելով կ'երթեւեկէր Մակար, յիշելով զարմանալի Արշակին զարմանալի պատմութիւնները եւ անոր բարձր, շէն ծիծաղը, միշտ լաւատես փիլիսոփայութիւնը ու վերջին պատուէրը:

– Համ լանք, համ երթանք, սիրելի Մակար: Երբ տեսնես, ուզում է կծել, գորտի չափ խելք ունեցիր: Չայն տուր, կը գանք, խելքի կը բերենք:

Մակար պահ մը մտածեց գործադրել Արշակին պատուէրը: Իսկոյն հեռագիր տալ եւ կանչել զոյգ Արշակները Ֆրանսայէն, Սիմոնը Ամերիկայէն: Այս վերջինին հետ թէեւ միշտ նոյն աղբիւրէն չէին խմեր, նոյնիսկ քանիցս բախումներ ալ ունեցած էին, բայց վստահ էր, ներկայ պարագային հետն էր: Չորսով, դիւրին էր չափին բերել այս «փրփրած լուսնոտը», նոյնինքն Սիմոնին բառերով:

Բայց ուշ էր: Պատերազմը ծայր տրւած էր արդէն Եւրոպայի մէջ, ճամբաները փակ, աշխարհը կրկին ալեկոծ, Հայ ժողովուրդը ցրուած ծագէ ծագ, թշնամի երկիրներու հակասական ազդեցութեանց տակ – ուշ էր: Մտահոգիչ ներկայ, շփոթ ապագայ: Կուսակցութիւնը աւելի քան երբեք պէտք ունէր միասնութեան, կերպով մը մնալու համար, դարձեալ, առաջնորդի դերին մէջ: Ներքին ցնցումներու ժամանակ չէր: Կու գայ նաեւ Վարդանին հաշիւը մաքրելու օրը:

Նաւէն երբ իջաւ, գտած էր ներքին խաղաղութիւնը:

Ընելիք չունէր: Սպասել, տեսնել:

Ու վերագարձաւ իր քիպուցներուն:



**CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE**  
**ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉ**

**La section Astrig du Val d’Oise**

organise  
**le samedi 19 mars**  
sa soirée annuelle avec,  
en exclusivité,  
**Harout PAMBOUKJIAN**  
accompagné de son orchestre.  
À partir de 20 heures  
à l’Espace Charles Aznavour,  
avenue P.V. Couturier  
à Arnouville (95400).

Tarif de l’entrée: 90 €.

Réservations :  
Anaïde : 01 39 85 19 40 / 06 20 84 88 61.  
ou Séta : 01 39 87 65 02 /  
06 18 50 70 58

**Section ARAX de Lyon Villeurbanne**

Dans le but de garder nos traditions et pour assurer leurs transmissions  
La Croix Bleue des Arméniens de France section de Lyon Villeurbanne vous convie  
au repas de MITCHINK (Mi-Carême)  
préparé spécialement pour cette journée  
le mercredi 30 Mars 2011  
à 12heures  
à la salle de Garbis Manoukian  
295, rue André Philip 69003 Lyon  
réservation- MCAV: 04 78 26 28 10  
CBAF 04 78 23 75 13

**ՄԻՋԻՆՔ**

Ֆրանսահայ Կապույտ խաչի Լիոն-Վիլլեորպանի Արաքս Մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ միասին տօնելու մեր աւանդական Միջինքը եւ ճաշակելու՝ մասնաւորաբար պատրաստուած օրուան յատուկ ճաշերը  
Չորեքշաբթի 30 մարտ 2011ին ժամը 12-ին Լիոնի Ա.Յակոբ Եկեղեցոյ կից Կարպիս Մանուկեան Սրահին մէջ:  
ապահովեցէ՛ք ձեր տեղերը  
հեռաձայնելով  
ՖԿԻՄ՝ 04 78 23 75 13 եւ  
ՎՀՄՏ՝ 04 78 26 28 71 թիւերուն

**ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ**

Երկու սենեակ  
կահաւորեալ կամ ոչ  
բոլոր յարմարութիւններով  
Վէնսէնի անտառին մօտ  
Մերթո՝ Շառանթոն-Էքոլ  
Հեռ.՝ 06 29 52 69 31

**À LOUER**

2 pièces, meublées ou non  
Près Bois de Vincennes  
Tout confort  
Toutes commodités  
Métro Charenton-Écoles  
Tél. : 06 29 52 69 31

**Musique arménienne**  
Lydie Barkev, piano  
Lucie Deroïan, chant  
Concert au profit du Fonds  
Arménien de France  
(équipement d’écoles en Arménie)

**dimanche 27 mars à 16h**

Espace Saint-Sauveur  
Hôpital Corentin-Celton  
4 parvis Corentin-Celton  
Issy-Les-Moulineaux  
Métro Corentin-Celton, ligne 12,  
Direction Mairie d’Issy  
Entrée libre participation

**LA SECTION DÉCINES Organise**

Un repas dominical  
à l’occasion du Mi-Carême  
**Le Dimanche 3 avril**  
**à partir de 12 h**

À la Salle des Fêtes de Décines  
Avec un menu de mets traditionnels  
de Mi-Carême

L’après-midi sera animé par  
D.J Mika

Participation pour les adultes  
20 €, apéritif et vin compris  
Enfants jusqu’à 10 ans: 12 €

Renseignements et réservation au  
06 50 90 22 63 ou

06 21 74 43 50

**SECTION ASTRIG DU VAL D’OISE COMMUNIQUÉ**

Afin de réaliser pleinement son programme d’enseignement de la langue arménienne, qui doit conduire nos enfants à l’épreuve d’arménien au baccalauréat, la CBAF section Astrig du Val d’Oise ouvre une classe de maternelle pour les enfants de 3 à 6-7 ans.  
Des jeux, de la danse, du dessin, des activités diverses, privilégiant l’expression orale, auront pour objectif l’apprentissage de la langue arménienne.

Inscrivez rapidement vos enfants à la CBAF section Astrig d’Arnouville  
Tel : Maral KELECHIAN  
01 39 85 26 32  
06 72 45 73 47

\*\*\*

**LA SECTION ASTRIG DU VAL D’OISE**

vous invite  
à participer à l’après-midi  
« Rencontre et Culture »,  
le lundi 11 avril, à 14 heures,  
au 71 avenue Henri Barbusse à  
Arnouville (95400).

Le thème du jour sera :  
Les intellectuels et notables  
victimes du génocide.  
Venez discuter avec nous de tout  
et de rien... Chaque personne peut  
s’exprimer...

À noter que d’autres sujets peuvent être  
abordés car la « parole est ouverte ».

Renseignements:  
Anita BOGHOSSIAN:  
01 39 90 76 19 – 06 16 79 93 26

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Ֆրանսահայ Կապույտ Խաչի Վալ տ’Ուազի «Աստղիկ» մասնաճիւղը իր երկօրեայ հայերէն լեզուի ուսուցման ամբողջական ծրագիրը հետեւողական դարձնելու համար, այս տարի զարկ կու տայ մանկապարտէզի դասարաններուն Յէն 6-7 տարեկան մանուկներու համար:

Խաղ, երգ, պար, մարմնական շարժում, գծագրութիւն, ձեռային աշխատանք եւ այլ զբօսներ հիմք պիտի ծառայեն յատկապէս բերանացի հայերէնով հայ մանուկը ընտելացնելու հայերէն լեզուին:

Շուտով դիմեցէ՛ք Ֆրանսահայ Կապույտ Խաչի Արնուվիլի մասնաճիւղին՝ Մարտի Քէլէշեան - հեռաձայն՝ 01 39 85 26 32 - 06 72 45 73 47



**Péniche ANAKO**  
des peuples et cultures du monde

### LE MOIS DE L'IRAN

jeudi 17 mars à 20h30

Jam Session avec Isabelle Sorling, chant,  
Leonardo Montana, piano,  
Nicolas Moreaux, contrebasse,  
Anne Pacey, batterie  
participation 8 euros, 6 t.r.

du vendredi 18 au dimanche 20 mars  
expo-vente de flûtes à bec artisanales  
vendredi 18 mars 10h jusqu'à 21h, nocturne  
samedi 19 mars 10h - 18h)  
dimanche 20 mars 10h - 13h  
entrée libre

samedi 19 mars à 21h

«Chants de printemps», concert de musique  
traditionnelle iranienne avec l'ensemble  
Delgosha. Taghi Akhbari, chant,  
Nader Aghakhani, târ,  
Arash Rashid Shomali, tombak.  
participation 12 euros, 8 t.r

dimanche 20 mars à 16h30

«Aseghi dzaguen, Paregoutan»  
avec Anahid Sarkissian, spectacle  
tout public

en langue arménienne.  
participation 8 euros, 6 t.r.

mardi 22 mars à 20h30

film «l'Ami» de Sara Rastegar

mercredi 23 à 20h30

Contes à Croquer  
participation 6 euros

jeudi 24 mars à 20h30

concert de jazz Astargallus  
avec Stéphane Payen, sax,  
Xavier Bornens, trompette,  
Janik Tallet, batterie, Thierry Mavian  
Marietan, contrebasse.  
participation 8 euros, 6 t.r.

samedi 26 mars à 20h30

Azarine 6 jazz «multi kulti» Assen Tzankov,  
batterie, Nicolas Bezins, trompette, Jean  
Baptiste Lecanu, basse,  
Arshid Azarine, piano, Habib Mefteh  
Boushehri, percussions, flûtes,  
Stéphane Mouchabac, saxophones,  
Hamid Reza Javdan et Nerijhe,  
performances et voix  
participation 12 euros, 8 t.r

dimanche 27 mars à 17h

**Poésies arméniennes de  
Nouvelle Djoulfa (Isphahan),  
Rouben Haroutunian, chant, récitant  
et setar,  
Anouch Donabedian, kamantcheh.**  
participation 12 euros, 8 t.r

# HAMASKAINE COURANTS D'ART



**REPAS A L'OCCASION DE LA MI-CAREME**

ՄԻՉԻՆՔ

**LE DIMANCHE 3 AVRIL 2011 A 12 H 30**

ԿԻՐԱԿԻ 3 ԱՊՐԻԼ 2011 ԺԱՄԸ 12 : 30

**AVEC POUR LA PREMIERE FOIS :**

❖ **LA TROUPE DE THEATRE DES ENFANTS  
DE COURANTS D'ART : "PAREGENTAN"**

❖ **LA TROUPE DE DANSE C.B.A.F. – SOSSE  
MAYRIG**

**PAF : ADULTE : 25,00 € Réservations :**

**ENFANT : 15,00 € Marie : 06 16 78 08 71**

**(6 à 12 ans) Seta : 06 10 25 17 16**

**HAMASKAINE – 60 Boulevard Pinatel – 13012 Marseille**

**le mont  
ararat**

**La Cuisine Méditerranéenne**

86 bis, rue Étienne Dolet, 94140 Alfortville  
Tél.: 33(0)1 43 76 41 59 – Fax: 33 (0)1 43 76 31 90  
www.lemontararat.com

**ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ  
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ  
ՓԱՐԻՉ**

*ԱՐԵՒԱԳԱԼ ԵՒ ՀՄԿՈՒՄ*  
*Ամեն Չորեքշաբթի ժամը 18ին*  
*Խաղաղական եւ Հանգստեան*  
*ժամերգութիւն (հսկում)*  
*Ամեն Ուրբաթ ժամը 10ին*  
*Արեւազալի ժամերգութիւն*



**INTIME ARMÉNIE  
PHOTOGRAPHIES DE  
RÉGIS LABOURDETTE**

Exposition ouverte jusqu'au 20 mars  
du lundi au vendredi de 9h30 à 17h  
le samedi de 15h à 17h  
le dimanche matin jusqu'à 13h30  
Les photographies présentées  
sont à la vente

Cathédrale Apostolique arménienne  
Saint-Jean-Baptiste de Paris  
Salle Nourhan Fringhian  
15, rue Jean Goujon, Paris 8°

**Galerie Gavart  
Mariam Hakobyan**



**du 7 au 27 mars 2011**

Ouverture du lundi au samedi 10h30-12 et 13h-19h  
5, rue d'Argenson 75008 Paris  
Métro Minimesnil, tél. : 01 42 65 26 98  
www.galeriegavart.com  
www.mariamhakobyan.com

Sous le Haut-Patronage de l'Ambassade  
d'Arménie en France

**journées de l'Arménie**

Ateliers créatifs  
23 mars, 30 mars et 6 avril  
Spectacle de danse  
Compagnie Navasart  
Jeudi 24 mars à 20 h 30  
Exposition  
du 23 mars au 6 avril  
Concert chorale  
Koghtan de l'UGAB  
Samedi 2 avril à 20 h 30  
Centre Culturel Alex Manoogian  
de l'UGAB  
118, rue de Courcelles 75017 Paris  
Entrée libre sur réservation  
contact@agbueurope.org  
ou 01 45 20 03 18

**SPORTING**

2gether 4justice

**Jeux Sportifs**

Intercommunautaires Arméniens  
de l'Union Arménienne de Suisse

**22 au 25 avril 2011 à Genève**  
www.uas-games.ch

**ÉVÉNEMENT UNIQUE POUR  
LA JEUNESSE ARMÉNIENNE  
D'EUROPE**

Revendiquons - Manifestons  
Commemorons  
Participons au sport  
Échangeons - Rassemblons

Pour s'inscrire ou pour toute demande  
d'information,  
veuillez visiter le site www.uas-games.ch  
nous écrire à info@uas-games.ch  
nous appeler au 0041 79 303 17 49



**ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ  
ԾԱԻԼԻ ՄԷՋ**

Ծալիլի «Լեւոն Ծանթ» դպրոցի  
աշակերտները  
կը ներկայացնեն  
Վարդանանքին նուիրուած  
գեղեցիկ յայտագիր մը,  
գեղարուեստական ճոխ բաժինով՝

**ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏ 20, ԺԱՄԸ 15ԻՆ**  
ATRIUM

Place Robert Schuman, 92370 Chaville  
Մուտքը ազատ է

**Cherche**

jeune fille parlant arménien  
pour s'occuper d'une petite fille  
de 4 ans et demi  
le lundi, mardi et/ou jeudi soir.  
Paris 15°; M° Charles-Michels  
Tél.: 06 08 67 76 14

**ԿԸ ՓՆՏՈՒԻ**

Ալֆորվիլի Սուրբ Մեսրոպ  
Կրթարանի մանկապարտէզի  
աշակերտներուն համար կը փնտրուի  
**ԿԻՆ ՕԳՆԱԿԱՆ ՄԸ՝ ՀԱՅԱՍՏՍՍ**  
**ԾԱԲԱԹԱԿԱՆ 20 ԺԱՄ**  
Դիմել դպրոցի տնօրէնութեան  
4, rue Komitas, Alfortville  
Հեռ.՝ 01 43 96 18 13

Association MACHTOTZ  
Pour la Défense de la Langue Arménienne

**L'ASSEMBLÉE GÉNÉRALE**

de l'Association MACHTOTZ

aura lieu

**mardi, 22 mars à 18h**

au Centre Culturel Alex Manoogian - U.G.A.B.  
118 Rue de Courcelles, 75017-Paris (Métro : Courcelles).

Ordre du jour :

Rapport moral - Rapport financier - Élection du nouveau Bureau - Divers  
*Cette réunion revêt, cette année, un caractère particulièrement important car  
il sera évoqué la mise sur pied d'un nouveau projet. Votre présence est donc  
vivement souhaitée.*

le Conseil d'Administration